ՕՐՀՆՈՒԹԻՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ·

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Մկրտիչ Սրբազնագոյն Հայրապետն ամենայն Հայոց որոշել է, յաջողութեամբն Աստուծոյ՝ սրբալոյս միւռոնի օրհնութիւն կատարել առաջիկայ սեպտեմբեր 28-ին, Վարագայ ս· Խաչի տօնի օրը, որ տասներորդ տարեդարձն է Իւր Քահանայապետական Օծման։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինութեամբ յատուկ հրաւէրներ կուղարկուին մեր վիճակաւոր առաջնորդներին։ Փոխանորդ վարդապետներ, ցանկացող վանահայրներ և եկեղեցեաց աւագերէցներ կարող են· այս սրբազան հանդիսին ներկայ գտնուել՝ ըստ կարելւոյն մեծ թուով այլ եկեղեցական պաշտօնէից հետ։

Օր առաջ հրաւէր է կարդացուում այսու նաև ի սփիւռս աշխարհի տարածեալ հայ ժողովրդեան, որի իւրաքանչիւր անդամը Միածնի Իջման տաճարում օրհնուած սուրբ միւռոնի դրոշմն է կրում իւր ճակատին և այդպէս միանում Քրիստոսի հօտին՝ պատրաստուել խուններում բաղմութեամբ դիմելու դէպի հանուրց Հայաստանեայց հոգևոր ծննդեան մայր այդ սուրբ տաճարը, ս. Հոգւոյ

շնորհաց առատաձիր զեղման խորհրդաւոր ժամին,—յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին բոլորում է այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ. ԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ *յանուն Դեր. Տ. Ներսէս արքեպս.-ի առաջնորդին Հայոց Ն. Նախիջևանի և Բեսսարաբիոյ, որով շնորհի արտօնութիւն Ն. Նախիջևանցի Սարգսի Նիկողայոսեան Քրիստեանց և կնոջն նորա Վարվառեայ՝ յետ մահու նոցա թաղել ի գաւթի ս. Աստուածածնին եկեղեցւոյ քաղաքին, պատուիրելով ստանալ գնուիրաբերեալն նոցա դուժար 3000 բուբլեաց յօգուտ յիշեալ եկեղեցւոյ. թ. 576։*

— *Յանուն Դեր. Տ. Գարեգին եպս.-ի, վանահօր վանուցն Սանահնի, որով պատուիրի սահմանել ռոճիկ վասն Զաքարեայ արեղայի տասն բուբլի առ ամիսն. թ. 592։*